ՄՈՒՏՔ

Դաժան շրջափակման մեջ է Արցախը: Համապարփակ շրջափակման՝ քաղաքական, տնտեսական, տեղեկատվական: Շրջափակված է ազգային պետական կազմավորումներից մեկը, որը ԽՍՀՄ գործող սահմանադրությամբ ֆեդերացիայի սուբյեկտ է: Շրջափակված է հնդեվրոպացիների նախահայրենիքի մի մասը, որի բնիկների լեզվի, հոգևոր ու նյութական մշակույթի ծալքերում լսելի են հեռավոր պատմության ձայները, և որի արմատական ժողովրդի նախնիները՝ պարսիկների, քրդերի, հույների ու սլավոնների արյունակից եղբայրները, մասնակիցները և վկաներն են եղել հայ էթնոսի ձևավորմանը այդ հրաշագեղ բարձրավանդակում: Դիմակայելով ճակատագրի դաժան հարվածներին, փրկելով իրենց երկրամասը բարբարոսներից, ասորիներից, բյուզանդացիներից, թաթար-մոնղոլներից ու սելջուկներից, արցախցիները իրենց երկրամասը հասել են 20-րդ դարի ափը, որտեղ, ավա՜ղ, նրանց սպասում էր պատմական ամենաաղետալի փորձությունը՝ բոլշևիզմի դավադրությունը: Հանուն համաշխարհային հեղափոխության ցնորական գաղափարի բոլշևիկները, որպես նվեր, «Արևելքի ջահակիր» Թուրքիային հանձնեցին Ռուսաստանի տարածքները հանդիսացող Կարսի ու Սուրմալուի հայկական պատմական հողերը և նրա պահանջով՝ Նախիջևանն ու Արցախը՝ Ադրբեջանին: Հայոց պատմական հողերի թալան ու առուծախ՝ «հանուն հեղափոխության»:

Արցախի վերաբերյալ «որոշումը» կայացվել է 1921 թվականի հոկտեմբերի 5-ին (ուշադրություն) Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կովկասյան բյուրոյի կողմից, մի մարմնի, որը նման իրավասություններ չուներ: ԱՅՆՊԵՍ ՈՐ, ՀԻ ԵՂԵԼ ՈՒ ՀԿԱ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ՍՐԻՆԱԿԱՆ ՈՐԵՎԷ ՀԻՄՔ, ՈՐԸ ՀԱՍՏԱՏԵՐ ԼՂԻՄ Ը ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ԼԻՆԵԼԸ: ԱՅՍՕՐ ԷԼ ԻՐԱՎԱԲԱՆՈՐԵՆ ԱՐՑԱԽԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԷ: ԱՊՕՐԻՆԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ՄԻ ԱՆՈՒՆ ՈՒՆԻ՝ ԲԸՆԱԶԱՎԹՈՒՄ (ԱՆԵՔՍԻԱ): Օբյեկտիվորեն դա այլ անուն չունի, քանի որ համաշխարհային հեղափոխության ցնդաբանությամբ արբած բոլշևիկյան լիդերները 1921-ին անտեսեցին Արցախի ժողովրդի լիազոր ներկայացուցիչների՝ Հայաստանի կազմում լինելու մասին բազմիցս ընդունված որոշումները: Ծվեն-ծվեն արեցին Հայաստանը, գութանով անցան (գլխավոր քարտուղարի սիրած արտահայտությունը) հինավուրց մի ժողովրդի հողերի, պատմության ու ճակատագրի վրայով: (Ինչպիսի խիղճ պետք է ունենալ Հայաստանի հետ վերամիավորվելու արցախցիների պահանջին ի հակադրություն պնդելու, թե չի կարելի գութանով կտրել-անցնել ազգային հարաբերությունների վրայով, երբ խոսքը ոչ թե գութանելու, այլ գութանածը բուժելու մասին է):

Ահա այսպես իբրև սումգայիթի նախերգանք գործի դրվեց «լենինյան ազգային քաղաքականությունը»: ԽՄԿԿ քաղբյուրոն այդ արյունարբու ազգային քաղաքականության արժանավոր ժառանգորդն է: 1988-ի փետրվարին, երբ հավատալով ժողովրդավարության հոչակած վերածննդին, մարզային խորհրդարանը միաձայն դիմեց Հայաստանի, Ադրբեջանի և ԽՍՀՄ գերագույն խորհուրդներին՝ Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը դրականորեն լուծելու միջնորդությամբ, քաղբյուրոն փետրվարի 21-ի շաբաթ ոչ աշխատանքային օրը չզլացավ հավաքվել նիստի՝ մարզխորհրդի նախորդ օրը կայացրած որոշմանը նացիոնալիզմի պիտակ կպցնելու համար: Նույն քաղբյուրոն, որի ձեռքին այդ ժամանակ գտնվում էր երկրի ամբողջ իշխանությունը, հանցագործ դիտավորությամբ թույլ տվեց Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերը՝ Միության ժողովուրդներից թաքցնելով ճշմար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տությունը Անդրկովկասի արևելքում ազերիների գործած գազանությունների մասին:

Թվում է, թե վերջին երկու տարում հասարակական շարժումների ճնշման տակ կուսակցական վերնախավը կորցրել է իշխանությունը: Միա՛յն թվում է: Իրականում պառլամենտական խաղերը սուտ ծածկույթ են այն իրողությունը քողարկելու համար, որ առաջվա պես իրական իշխանությունը երկրում իրավաբանորեն անորոշ այն խմբավորումների ձեռքին է, որին պայմանականորեն ԿԵՆՏՐՈՆ անունն են տալիս: Ժողովրդավարության, սոցիալական ու ազգային արդարության գործը շարունակաբար հենց Կենտրոնի դավադրություններին ու ծուղակներին է դեմ առնում: Եվ քանի դեռ նրան և ոչ թե պառլամենտին է պատկանում իրական իշխանությունը երկրում, նորացման գործընթացի անշրջելիության մասին խոսք լինել չի կարող:

Հատկապես դաժան են Կենտրոնի հանցավոր քայլերը ժողովրդավարության, ազգային արդարության մեր օրերի շեփորահարի՝ Արցախի նկատմամբ: Զարախոսությունը, փաստերի լկտի կեղծումը, սումգայիթի վանդալներին իր տեղեկատվական հովանու տակ առնելը Կենտրոնը արդեն գրանցել է իր «ծառայությունների» ցուցակում: Արցախի վրա իրենց մաղձն են թափում երկրի բոլոր հետադիմական ուժերը: Որոշակի իմաստով արցախյան հիմնահարցի մեջ համարժեքորեն արտացոլվում է ամբողջ երկրի ժողովրդավարության գործընթացը: Ո՞վ կհաղթի՝ դեմոկրատիան, ազատությունը, ճշմարտությո՞ւնը, թե՞ պարտոկրատիան, մաֆիան, բռնությունը, կեղծիքը: Առայժմ գործը շահում են վերջինները: Շահում են ոչ միայն Արցախում, այլև երկրի ու մոլորակի տարբեր կետերում: Արցախի հարցը մասնավոր հարց չէ: Խեղդելով Ազատության ու Արդարության ձայնը Արցախում, մեր օրերի մութ ուժերը, մարդկությանը ետ են քաշում դեպի միջնադարի խավարն ու անօրինությունը:

Առաջադիմության ու արդարության և ոչ մի ջատագով աշխարհի և ոչ մի ծայրում չի կարող վստահ լինել մարդկային քաղաքակրթության ապագայի համար, երբ Արցախը շրջափակել ու նրա բարձրանիստ լեռներում խնջույքի են նստել Բռնությունը, Կեղծիքը, Անարդարությունը, Բարբարոսությունը:

Աշխարհի և ոչ մի ծայրում աստվածապաշտ և ոչ մի հավատացյալ չի կարող հանգիստ լինել,— ինչ հավատք էլ նա ունենա,— երբ Արցախում գնդակոծում ու ավերվում են եկեղեցիները, հալածվում նրա սպասավորները:

Աշխարհում և ոչ մի ժողովուրդ չի կարող վստահ լինել իր ապագայի համար, քանի դեռ կան սումգայիթ կազմակերպող, ժողովրդի կամքին բռնացող ուժեր: Պատմությունը երկար սպասել չտվեց անպատիժ մնացած սումգայիթյան ուժերին երևալու Նովի Ուզենում, Տուվայում, Օշում...

Նույն ուժերն են գրավել երկրի լրատվական միջոցները՝ փորձելով կեղծիքի, փարիսեցիության հեղեղի մեջ խեղդել հասարակական գիտակցությունը: Տեղեկատվական տեռորի թունոտ նետերը առաջին հերթին ուղղված են Արցախի դեմ:

Ահա այսպիսի պայմաններում է ասպարեզ իջնում «Արցախականը»: